ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

10.09.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1 գնման պայմանագրի

ք. Երևան 25.02.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշումը և ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 10.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին հաստատել 2021թ. հատկացված գումարի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը համաձայն համաձայնագրի հավելվածներ N 1-ի և N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելված N 1-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Օրբելի եղբայրներ 65ա, 47բն
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500905218000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00843968
Հ/Հ 900011023661, ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Մ. Միսակյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
10.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1 գնման պայմանագրի
25.02.2021թ. կնքված N 2 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2021թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների

N	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը*
1	Միաձույլ երկաթբետոնե աշխատանքներ	50 000 000	90 օրացուցային օր

Համաձայնագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում օբյեկտում ապաստարանի կառուցման նպատակով Պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայանագրի կնքման հաջորդ օրը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023661, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Օրբելի եղբայրներ 65ա, 47բն
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968

Տնօրեն՝

_____ Մ. Միսակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
10.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1 գնման պայմանագրի
25.02.2021թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211231/9	ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	-	-	-	29 424 300	29 424 300	29 424 300	40 796 800	40 796 800	40 796 800	50 000 000	50 000 000	50 000 000	50 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023661, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Օրբելի եղբայրներ 65ա, 47բն
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968

Տնօրեն՝

_____ Մ. Միսակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 1101-02

«24» 02 2021

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Գազկոմշին» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1» ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներեքերորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 01.03.2022թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 1102-02

«24» 02 2021

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Գազկոմշին» ՍՊԸ-ի միջև կնքվելիք N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվող N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 01.03.2022թ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ե. Սարգսյան